Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

22765

331.1
K-89

1931

15 JAN 2010
31-VI
1329
1328
331.1
Ա-89

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

331.1
Ա-89

ԹԻՖԼԻՍ 1931

107

25 FEB 2013

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Կոլ. պայմանագիրը հանդիսանալով յերկուստեք պարտավորություն արհմիությունների և տնտ. օրգանների կողմից. իր բոլոր մասերով պետք է կատարվի վոչ միայն տնտ. կազմակերպությունների, այլև միությունների մեջով կազմակերպված բանվորների կողմից»։

ՇՎԵՐՆԻԿ

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքված է մի կողմից Հայաստանի տպագրական բանվորների արհմիության Պետհրատի գործարկոմի նախագահ՝ Վ. ՍԱՐՈՅԱՆԻ, — վորպես «Պրոֆօրգանի» և մյուս կողմից, Պետհրատի վարչության նախագահ Ն. ՄԱԿԻՆՑԻ միջև, վորպես «Ձեռնարկություն», հետևյալի մասին։

2. Կոլպայմանագրի հիմնական նպատակն է՝ ապահովել կատարումն տնտեսական այն

22765

առաջադրանքների, վոր դրված է բանվոր դասակարգի առաջ ժողտնտեսության սոցիալիստական վերակառուցման, յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում, ապահովել հնգամյակի կատարումը 4 տարում և այդ հիման վրա բարելավել բանվոր դասակարգի նյութական և կուլտուր-կենցաղային դրությունը: Յելնելով վերոհիշյալից, Պետհրատի ադմինիստրացիան, գործարկոմը, բանվոր-ծառայողներն ու խմբագրության աշխատողները պարտավորություն են ստանձնում լրիվ կատարել 1931 թվականի արտֆինպլանի քանակական և վորակական ցուցանիշները, և տնտեսական որգանի ընդունած հանդիպական արտֆինպլաններից բղխող առաջադրանքները:

## I. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏՖԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

3. Կոլպայմանագիրը կնքվում է փոխադարձ պարտականությունների կատարման հիմունքներով և կողմերը պարտավորվում են ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի առնվազն 100%-ով կատարվի հանդիպական



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
56632-66

արտֆինպլանով ընդունված հետևյալ հիմնական ցուցանիշները:

ա) Կատարել տարեկան ընդհանուր արտադրանքը . . . . . . . %-ով

բ) բարձրացնել արտադրողականությունը . . . . . . . %-ով

գ) իջեցնել ինքնարժեքը . . . . %-ով

դ) պահպանել աշխատավարձի ընդհանուր ֆոնդը.

4. Յելնելով արդեն աշխատանքի մեթոդ դարձած սոցմրցակցության ու հարվածայնության նշանակությունից, Պետհրատի բանվորները, ծառայողները, վորպես հարվածային գործարանի աշխատավորներ, պարտավորվում են վերջ տալ ուշացումներին, հոսունության, ինքնաամրացման միջոցով, պայքարել սիմուլիացիայի, պրոգուլների և կեղծ հարվածայնության դեմ, ել ավելի ուժեղացնել աշխատանքային դիսցիպլինան՝ կատարելով ներքին կանոնադրության ընդունված կետերը:

5. Պետհրատի բանվոր-ծառայողները, խմբագրության աշխատավորները Յերեվանի Բանկոոպի աշխատանքներն ուժեղացնելու համար պարտավորվում են ժամանակին մուծել փայավճարները և ուժեղացնել բան-

վորական հսկողությունը Բանկոայի խանութների, ճաշարանների վրա—շեֆության վերցնելու միջոցով. բայց միևնույն ժամանակ պահանջում, վոր բանկոայը Պետհրատին կից բաց անի ճաշարան, յերկու հերթի բուֆետ և սպասարկման գործն էլ ավելի կանոնավորի:

## 2. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Վորպեսզի արտֆինպլանի 100%-ով կատարումը ձեռնարկության կողմից ապահովված լինի, ադմինիստրացիան պարտավոր է ժամանակին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ճիշտ կազմակերպվի արտադրության պրոցեսսը, հիմք ունենալով սոցիալիստական ռացիոնալացումը, ձեռնարկությունը ապահովված լինի հումույթով (թուղթ, ներկեր, տառեր, գործիքներ և այլն), վորոնց պակասությունը պլանի կատարման վրա կանդրադառնա:

7. Մինչև 1931 թ. մարտի 15-ը արտֆինպլանները իր հիմնական ցուցանիշներով պետք է հասցված լինեն ցեխերին և անհատ բանվորներին:



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պլանների կատարման և սոցմրցման արդյունքների մասին ադմինիստրացիան առնվազն ամիսը մեկ անգամ ցեխերի ժողովներում, արտխորհրդակցություններում և կամ կոլեկտիվի ժողովում պարտավորվում է տալ զեկուցում:

8. Մարտ ամսից սկսած պետք է կատարել հատուկ հաշվառում սոցմրցման և հարվածայնության ու անհատ բանվորների առաջարկների տնտեսական եֆեկտների արդյունքների, դրա համար նախորոք մշակելով հատուկ ձև, վորը համաձայնեցնել իրենց՝ բանվորների հետ:

9. Պլանով նախատեսված և հաստատված պարգևատրման ֆոնդը ոգտագործել առանձին յեռամսյակներին կամ կիսամյակների կատարման արդյունքները պարզելուց հետո: Ֆոնդի ոգտագործումը թույլատրվում է արտադրական խորհրդակցության և գործարկոմի համաձայնությունից հետո:

10. Բանվորական ուժի հոսունության դեմ պայքարը ավելի ուժեղ կերպով տանելու համար ձեռնարկության ադմինիստրացիան պարտավորվում է աշխատանքի ընդունումը կատարել գործարկոմի համաձայնությունը ստանալուց հետո:

## 3. ԿՈՒԼՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

11. 1931 թ. ընթացքում վերջնականապես ավարտել 1930 թ. ընթացքում սկսված բանվորական բնակարանի կառուցումը իր 2-րդ մասի հետ և թե 1931 թ. ընթացքում նախատեսվածը, օգտագործելով այդ նպատակի համար հատկացված գումարները, հատուկ պայմանագրեր կնքելով այդ առթիվ Հայպետշինի հետ:

Բանվորական շենքում պետք է լինի մսուր և մանկապարտեզ, կարմիր անկյուն, հանրակացարան և բանկոոպի խանութ իր բոլոր հարմարություններով:

> ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մանկապարտեզը պետք է իր աշխատանքները սկսի 1931 թ. դպրոցական սեզոնին և ձեռնարկությունը պարտավոր է հոգալ մանկապարտեզի տաքացման, լուսավորության ծախսերը ու հատկացնել մեկ ռոյալ:

12. Բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը էլ ավելի ապահովելու և բանվորական մատակարարման գործին օժանդակելու համար Գետհրատը պարտավոր է ամենաուշը յերկու ամսվա ընթացքում հիմնարկության կից բանվոր. ճաշարանի համար



վայր, և Բանկոոպի վարչության հետ հատուկ պայմանագիր կնքելու միջոցով, սպասարկել բանվոր-ծառայողներին տաք ճաշ հայթայթելով:

13. 1931 թվի մինչև ապրիլի 1-ը վերջացնել ակումբի կառուցումը, որը բացի մի մեծ դահլիճից, պետք է ունենա յերկու առանձին սենյակներ համապատասխան կահույքով, ռադիո, մի կինո ապարատ և հարմարություններ:

14. Գետհրատում տպագրված բոլոր տեսակի գրականությունից մեկական օրինակ հատկացվում է կարմիր անկյան կից գրադարանին:

> 1. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գետհրատում տպագրված բոլոր տեսակի գրքերից և ժուռնալներից բանվորները ստանում են ինքնարժեքով, գործարկոմի միջոցով մեկական օրինակ

> 2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Թերթերի վրա աշխատող բանվորներին, սրբագրիչներին և խմբագրության աշխատակիցներին տրվում է մեկական օրինակ թերթ, ձեռնարկության հաշվին:

15. Գետհրատը պարտավոր է տարեկան իր օգուտի 10%-ը հատկացնել բանվորների կենցաղը բարելավող ֆոնդին:

16․ Գործարկոմի համար ձեռնարկությունը հատկացնում է առանձին սենյակ իր բոլոր հարմարություններով, միևնույն ժամանակ հոգալով նրա տաքացման, լուսավորության և հեռախոսի ծախսերը։

17․ Ձեռնարկությունը գործարկոմի պահպանության համար վճարում է բաժանված բոլոր տեսակի աշխատավարձի մեկ ու կես տոկոսը (1½%)։

Այս հատկացումները պետք է կատարվի ոչ ուշ աշխատավարձը բաժանելուց յերեք որ հետո։

18․ Ադմինիստրացիան պարտավոր է բանվորների կողմից տրված գյուտերի և առանձին արդյունաբերությանը վերաբերող առաջարկները քննության առնել հինգ օրվա ընթացքում։

Այն գյուտարարի առաջարկությունը, վորը կընդունվի արտադրական խորհրդակցության, գյուտբյուրոյի և ադմինիստրացիայի կողմից, գյուտարարական ֆոնդից նրան պետք է տրվի պարգև և գյուտը պատրաստելու համար անհրաժեշտ գումար, համաձայնեցնելով այն գյուտարարական բյուրոյի հետ։

19․ Պետհրատի վարչությունը պարտավոր է հոգ տանել, վոր տպելու



համար տպարան ուղարկած բոլոր տեսակի նյութերի բնագրերը (գրագրերի, ժուրնալների, բրոշյուրների և այլն) լինեն մաքուր՝ պիտանի ընթերցանության համար, առանձնապես հատուկ անունները ու թվերը պարզ գրված, մեքենայագրված և վերջնական խմբագրության։ Սրբագրատանը պետք է լինեն քարտեզներ, որացույցներ, բառարաններ և այլ ուղեցույցներ, ինչպես և պահարաններ բնագրերը պահելու համար։

20․ Սրբագրիչների (թերթերի և մյուսների) աշխատանքի համար պետք է հատկացվի լուսավոր, մաքուր, տաք և գիշերվա համար անհրաժեշտ լուսավորությամբ սենյակ։

## 4․ ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21․ Պետհրատի գործարկոմը պարտավորություն է վերցնում իր վրա, վորպեսզի հատուկ հսկողություն ունենա կողմերի կողմից վերցրած պարտականությունները ժամանակին կատարելու և այդ պարտականություններին անմիջականորեն ոգնելու համար։ Յերեք ամիսը մեկ անգամ կազմակերպվում է մասսայական ստուգում, սույն

պայմանագրի անշեղորեն կիրառումը ապահովելու համար:

22. Արտադրական հանձնաժողովի աշխատանքները լրիվ չափով վերակառուցվելու են մինչև ապրիլի 1-ը և արտադրական խորհրդակցության միջոցով ու գործարկոմի անմիջական ղեկավարությամբ ժամանակին քննության առնել արտադրության և արդֆինպլանների կատարման խոչընդոտ հանդիսացող բոլոր այն խնդիրները, վորոնք կըծագեն գործարանում և կամ կառաջադրվեն բանվորների կողմից:

23. Ցելնելով պարտադիր ուսման խոշոր նշանակությունից, գործարկոմը հանձն է առնում բանվորների 8–15 տարեկան յերեխաներին տեղավորել դպրոցներում, միության հետ բաց անել լիկկայան՝ անգրագետ ու կիսագրագետ բանվորների և նրանց ընտանիքի անդամների անգրագիտությունը վերացնելու համար: Գործարկոմը հանձն է առնում կարմիր անկյունի աշխատանքները վերակառուցել այնպես, վորպեսզի կարողանան սպասարկել բանվոր-ծառայողների կուլտ. պահանջներին, ակումբում կազմակերպելով հատուկ գրադարան-ընթերցարան, դրամատիկական խումբ, յերաժշտական սեկցիա և ամսական յերկու անգամ կազմակերպել յերեկո-ներկայացումներ, կազմակերպել ռուսաց լեզվի ուսուցման և սպորտ ու քաղ. խմբակներ:



24. Գործարկոմը հանձն է առնում բանվորության սպասարկման գործը այնպես կազմակերպել, վորպեսզի բանվորը ինքը շատ ժամանակ չկորցնի դրա համար, նախօրոք այդ հնարավորությունները ստեղծելու համար բանակցելով Բանկոոպի և այլ մատակարարող հիմնարկների հետ:

Գործարկոմը հանձն է առնում հատուկ հոգածություն սահմանել հիմնարկության կից բացվելիք ճաշարան-բուֆետի աշխաներին և միևնույն ժամանակ աշխատել, վորտանքներին և միևնույն ժամանակ աշխատել, վորպեսզի հնարավորության դեպքում հիմնարկության կից բաց արվի փակ բաշխիչ խանութ:

25. Գործարկոմը հանձն է առնում դիսցիպլինան ուժեղացնելու, հոսունության դեմ պայքարելու և հարվածայնությունը ու սոցմրցումը ել ավելի ուժեղացնելու համար ձեռք առնել բոլոր միջոցները և այդ ուղղությամբ մոբիլիզացիայի յենթարկել պրոֆակտիվին և ամբողջ բանվոր-ծառայողներին:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՈՒ ԱՐՁԱԿԵԼԸ

26. Ձեռնարկության ադմինիստրացիան պարտավորվում է աշխատանքի ընդունել առաջին հերթին արհմիության անդամներին՝ բացառապես Աշխ. Բորսայի միջոցով. միաժամանակ ադմինիստրացիան պարտավոր է առաջին հերթին աշխատանքի ընդունել ձեռնարկության հարվածային բանվորների յերեխաներին. բացառությամբ թերթերի վորակյալ աշխատողների ու մասնագետների, վորոնց ընդունելությունը կատարում է ադմինիստրացիան նախորոք համաձայնեցնելով Միության հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր տեսակի աշխատողների ընդունելության դեպքում ադմինիստրացիան պարտավոր է յերկու որվա ընթացքում հայտնել ձեռնարկության գործարկոմին: Գործարկոմին իրավունք է վերապահվում յուրաքանչյուր նոր ընդունվող բանվոր-ծառայողի նկատմամբ հիմնավորված բացարկ տալու յերկու որվա ընթացքում, յեթե ադմինիստրացիան գործարկոմի պատճառաբանության հետ չի համաձայնվում, խնդիրը լուծվում է կոնֆլիկտային կարգով:



27. Փորձնական աշխատանքի ժամանակամիջոցը բանվորների համար սահմանվում է աշխատանքային 6 որ, ծառայողների ու խմբագրատան աշխատողների համար 12 որ, վորի ընթացքում ադմինիստրացիան վորոշում է նրա պիտանիությունը և աշխատավարձի չափը: Հիշյալ ժամանակամիջոցից ավել պահվածներն անցնում են ձեռնարկության հաստիքի մեջ:

28. Մեկ ամսից վոչ ավել ժամանակով աշխատողները՝ ժամանակը լրանալիս արձակվում են աշխատանքից առանց լուծարքային հատուցման, իսկ սահմանած ժամկետից ավել պահվածները մեխանիկորեն հաշվվում են անցած ձեռնարկության հաստիքի մեջ.

29. Հաստիքի կամ արտադրության կրճատման դեպքում առաջին հերթին հավասար վորակ ունեցողներից կրճատվում են վոչ միության անդամները և ընտանիքով քիչ ծանրաբեռնվածները:

30. Աշխ. օրենսգրքի 47-րդ հոդվածի «Ա» և «Ցե» կետերի հիմունքներով արձակելը կիրառվում է Միության նախնական համաձայնությամբ:

Ձեռնարկների լուծարքի կամ նրանց հաստիքների կրճատման դեպքում խնդիրը

լուծվում և անմ. մարմնի և գործարկոմի համաձայնությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տպագրիչ Արհմիության Կենտ. Վարչության և գործարկոմի անդամների կրճատման հարցը նախօրոք պետք է համաձայնեցվի գործարկոմի և միության կենտրոնական Վարչության հետ:

31. Բոլոր դեպքերում արձակման ենթարկված աշխատակիցները, փաստորեն աշխատանքից ազատված են համարվում իրենց հասանելիքները ստանալուց հետո:

32. Ռացիոնալիզացիայի և մեխանիզացիայի հետևանքով կրճատվածները ստանում են մեկ և կես ամսվա նպաստ, երեք ամսվա միջին աշխատավարձի չափով, բայց ոչ պակաս՝ տվյալ աշխատակցի վերջին ամսեկան աշխատավարձի չափով:

33. Բանվոր-ծառայողները պաշտոնից արձակվելու (կրճատվելու) դեպքում լուծարքային հատուցում են ստանում 15 օրվա աշխատավարձի չափով, անկախ նախազգուշացումից:

34. Այն դեպքերում, երբ գործուղված աշխատակիցը չի կարողացել տալ պահանջվող նյութ հաշվետվություններն ինֆորմացիա՝ իրենցից անկախ պատճառներով (նիստի չկայանալը, թերթին հետաքրքրող նյութի բացակայությունը և այլն) նրան տրվում է պատվիրված նյութի նորմալ գնահատության 50%-ը:

35. Թերթերի ամենօրյա աշխատակիցները (սրբագրիչները, գիշերային էքսպեդիտորները, տպարանի մշակները և հաշվիչները) առաջին հերթի աշխատանքների համար ստանում են 10%, իսկ 2-րդ հերթի համար՝ 20%, հիմնական կոպարից ավել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առաջին հերթին աշխատանք համարվում է հիշյալ աշխատակիցների համար ցերեկվա ժամը 4-ից մինչև 10-ը, իսկ 2 հերթի աշխատանքը հաշվվում է գիշերվա ժամը 10-ից մինչև առավոտյա ժամը 5-ը:

36. Եթե անկախ աշխատավորների կամքից, նա չի արտադրել այնքան, որքան պահանջվում է տվյալ կոպարով և ֆիքսով (թերթերի ժամանակավորապես ծանրաբեռնված լինելը ուրիշ նյութերով, թերթերի հերթական համարների անկանոն հրատարակումը կամ հրատարակման ժամանակավոր դադարումը) այդ հանգամանքն առիթ չի կարող ծառայել, որպեսզի սահմանված աշխատավարձը կրճատվի:

56632-66
ՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ

37. Խմբագրության պատվերով ժամանակին հանձնված գրական խոշոր պատվերը, որը անպետքացրված է խմբագրության կողմից, վարձատրվում է նրա նորմալ գնահատության 50%-ի չափով, իսկ անպիտված փոքր նյութի համար վարձատրություն չի տրվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս կետը չի տարածվում թերթերի թարգմանիչների վրա:

38. Տպագրության համար ընդունված (տպարան ուղարկված և նրա տպագրության համար խմբագրության կողմից հեղինակին հավաստիացրած) բայց ինչ ինչ պատճառներով չտպված նյութը գնահատվում է որպես տպագրված:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐ

39. Պետհրատի տպարանում աշխատանքի տևողությունը սահմանվում է 7 ժամյա բանվորական օրով:

Գրասենյակի և թերթերի խմբագրությունների աշխատակիցները՝ աշխատում են 6 և կես ժամ (հաշված հանգստի կես ժամը):

40. Տպարանում առաջին և երկրորդ հերթի աշխատանքները կատարվում են 7 ժամով. 3-րդ հերթի աշխատանքները 6 ժա-



մով: 6 ժամ աշխատում են նաև ցինկոգրաֆիայի տրավիլշչիկները և ԲՈՒՀ-երի ուսանողները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն բանվորները, որոնք աշխատում են առաջին և 2-րդ հերթերին՝ կատարելով գործարքային աշխատանք 3-րդ հերթի փոխադրվելիս մեկ ժամ պակաս աշխատելու դիմաց ստանում են հատուցում՝ համաձայն Աշխ. Օրենսգրքի 96-րդ հոդվածի: Գիշերային աշխատանքի ամեն մի ժամի համար վարձը համապատասխան չափով ավելանում է: Գիշերային մի ժամը վարձատրվում է ինչպես ցերեկվա մի ժամի 8/7-ականը (հոդված 94) և 6/5-ականը (հոդված 95):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Գործավարձով աշխատելիս՝ բանվորներն այդ դեպքում, բացի գործավարձի հաշվով ստացած աշխատավարձից, ստանում են գիշերային աշխատանքի ամեն մի ժամի համար իրենց կատեգորիայի ժամավարձի 1/7-ականը կամ 1/5-ականը (հոդված 94—95).

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— 3-րդ հերթին չի թույլատրվում աշխատել անչափահասներին և կանանց:

41. Գիշերային աշխատողների համար

հիմնարկությունը պարտավորվում է հատկացնել մի առանձին սենյակ, որտեղ հնարավոր լինի հանգստանալ մինչև աշխատանքի անցնելը, կամ աշխատանքից հետո՝ մինչև տուն գնալը:

## 7. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

42. Պետհրատի տպարանի բոլոր բանվորները և Վարչա-տեխնիկական անձնակազմը աշխատավարձ են ստանում ժամավարձային սիստեմով: Ամսական աշխատանքի ժամերը հաշվվում են 171 ժամ և աշխատավարձը բաժանվում է տվյալ ժամերի վրա ու դուրս է բերվում մի ժամավարձը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ժամավարձով աշխատավարձ չեն ստանում՝ տպարանի դիրեկտորը, տպարանի վարիչները, ռացիոնալիզատորը, տեխ. ինստրուկտ., գրասենյակային ծառայողները և խմբագրության աշխատողները:

43. Ձեռնարկության մեջ գոյություն է ունենում հետևյալ 5 տարիֆային ցանցը՝

ա) աշակերտական, որոնց առաջին կարգի համար որոշվում է ամսեկան 22 ռ. 63 կ., իսկ մի ժամվանը 13.5 կոպեկ: Հետագա կարգերի դրույքները սահմանվում է



4 կարգանոց ցանցով 1:1.9 հարաբերականով:

| Կարգ | Կոեֆցենտ | Մի ժամվա | Օրվա | Ամսական |
|---|---|---|---|---|
| 1 | 1 | 13,5 | 94,3 | 22--63 |
| 2 | 1.2 | 16,2 | 113,2 | 27--16 |
| 3 | 1,5 | 20,3 | 141,5 | 33--95 |
| 4 | 1.9 | 25,7 | 149,2 | 43-00 |

բ) բանվորական, որոնց առաջին կարգի համար որոշվում է ամսեկան 32 ռ. 33 կոպ., իսկ մի ժամվանը 19.2 կոպ., հետագա կարգերի դրույքները սահմանվում են 8 կարգանոց ցանցով՝ 1:2,8 հարաբերականով:

| Կարգ | Կոեֆցենտ | Մի ժամվա | Օրվա | Ամսական |
|---|---|---|---|---|
| 1 | 1, | 19.2 | 134,7 | 32-33 |
| 2 | 1,2 | 53.0 | 161,6 | 38-80 |
| 3 | 1,45 | 27.8 | 195,3 | 46-88 |
| 4 | 1,7 | 32,6 | 229,0 | 54-96 |
| 5 | 1,95 | 22,4 | 262,7 | 63-04 |
| 6 | 2,2 | 42,2 | 206.3 | 71-13 |
| 7 | 2,5 | 48,0 | 336,8 | 80-83 |
| 8 | 2.8 | 53,8 | 377,2 | 00--52 |

գ) ծառայողական, որոնց առաջին կարգի համար որոշվում է ամսեկան 45 ռ. 75 կոպ.: Հետագա կարգերի տարիֆային կոպարը որոշվում է համաձայն հետևյալ

տարիֆային ցանցի՝ 1:4.5 հարաբերությամբ։

| կարգ | կոեֆցենտ | կարգ | կոեֆցենտ |
|---|---|---|---|
| 1 | 1,0 | 7 | 2,6 |
| 2 | 1.2 | 8 | 2,9 |
| 3 | 1,4 | 9 | 3,3 |
| 4 | 1.7 | 10 | 3,7 |
| 5 | 2,0 | 11 | 4.1 |
| 6 | 2.3 | 12 | 4,5 |

դ) վարչա-տեխնիկական, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսեկան 88 ռ. 32 կ. հետագա տարիֆային դրույքները սահմանվում են 12 կարգանոց ցանցով 1:3.0 հարաբերականով։

| կարգ | կոեֆցենտ | կարգ | կոեֆցենտ |
|---|---|---|---|
| 1 | 1.0 | 7 | 2,1 |
| 2 | 1,1 | 8 | 2,3 |
| 3 | 1.3 | 9 | 2.5 |
| 4 | 1,5 | 10 | 2.7 |
| 5 | 1.7 | 11 | 2.9 |
| 6 | 1,9 | 12 | 3,0 |

ե) խմբագրական աշխատավորներ, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսեկան 63 ռ. 07 կոպ., հետագա տարիֆային կոպարը վորոշվում է համաձայն հետևյալ տարիֆային ցանցի։



| կարգ | կոեֆցենտ | կարգ | կոեֆցենտ |
|---|---|---|---|
| 1 | 1.0 | 8 | 2.2 |
| 2 | 1,1 | 9 | 2.2 |
| 3 | 1,2 | 10 | 2 6 |
| 4 | 1.4 | 11 | 2.8 |
| 5 | 1,6 | 12 | 3.0 |
| 6 | 1,6 | 13 | 3.2 |
| 7 | 1,8 | 14 | 3.4 |
| | | 15 | 3,6 |

45. Աշխատավարձը, գործավարձային և բոլոր այլ տեսակի վարձատրությունները կատարվում են ամիսը յերկու անգամ՝ բանվորների համար ամսի 5-ին և 20-ին, իսկ մյուս աշխատակիցների համար ամսի 1-ին և 16-ին, աշխատանքի մոմենտում։

45. Ձեռքով շարվող լրագրերի վրա աշխատող բանվոր-ծառայողները, գրաշարները, սրբագրիչները և յերես կապողները, վորոնց վրա վորևէ լրագրի ամբողջ շարվածքը, յերես կապելը և սրբագրելը վորոշ ժամանակում լրացնելու պարտականությունն է դրված, ստանում են լրացուցիչ վարձատրություն հիմնական դրույքի 10%-ի չափ (ինչպիսի թերթերն են «Խ. Հ.», «Կարմիր Զինվոր», «Ավանգարդ», «Մաճկալ», «Սու.

Արշավ», «Կըզըլ Շաֆակ», «Գյուղ. բանվոր»)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն բոլոր տպագրիչները և սեվագործ բանվորները, վորոնք սպասարկում են լրագրի տպագրության աշխատանքներին, նրանք նույնպես ստանում են իրենց հիմնական գրույքի 10 %-ը, վորպես հավելյալ վարձատրություն իրենց փաստացի աշխատած ժամերի համար։

16. Լինոտիպի, ռոտացիոնի և ստերեոտիպի բաժինների աշխատող բանվորներն ու աշակերտները անխտիր ստանում են հավելյալ վարձատրություն իրենց հիմնական գրույքի 10%-ի չափով՝ վորպես վնասակար, աննորմալ ցեխերի և լարված աշխատանքի համար։

17. Պետհրատում գոյություն ունեցող բոլոր ցեխերի աշխատանքները (բացի գրասենյակից և խմբագրությունից) կատարվում են գործավարձով։

18. Պետհրատի տպարանում գոյություն ունեցող բոլոր ցեխերի գործավարձային նորմաները վերանայվում են և սահմանվում են։ Նորմաների և գնահատումների վերանայումը պետք է ապահովի՝ արտադրողականության և աշխատավարձի բարձրացման



նկատմամբ 1931 թվի պլանով նախատեսնված առաջադրանքների կատարումը։

ա) Մեկ բանվորի միջին արտադրանքի աճումը 1930 թվի հանդեպ՝ 26–27 թ. կայուն արժեքով . . . . 29,4%։

բ) Մեկ բանվորի միջին աշխատավարձի աճումը 1930 թվի հանդեպ 3,5%։

49. Գործավարձային ձևով են աշխատում նաև թերթերի, ժուռնալների և բրոշյուրների սրբագրիչները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հետեվյալների արտադրանքի նորմաները և գնահատումները կցվում են սույն պայմանագրին։

50. Արտադրանքի նորմաները սահմանվում են տեխնիկական չափագրման (խրոնոմետրաժի և բանվորական օրվա լուսանկարման) տվյալների հիման վրա՝ տեխնիկապես հնարավոր առավելագույնը— յելնելով ձեռնարկության փաստական պայմաններից և միջին բանվորի հաշվով։

1. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ձեռնարկության այն ցեխերում և աշխատանքի առանձին պրոցեսներում, վորտեղ տեխնիկական չափագրումը հնարավոր չէ, նորմաները կարելի յե սահմանել հաշվառման և վիճակագրական տվյալների հիման վրա։

2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Նորմաները սահմանելիս պետք է հաստատել նաև աշխատանքները կատարելու համար մեքենային սպասարկող՝ բրիգադայի անհրաժեշտ չափը։

51. Վերանայվող և նոր սահմանվող գործավարձային նորմաներն ու գնահատումները կատարում է ադմինիստրացիան և հաստատում է Գ. Կ. Հ., իսկ կիրառվում են հաստատման օրից մինչև մեկ տարի ժամանակով։

52. Ադմինիստրացիան պարտավոր է առանձին պրոցեսների նորմաները ու գնահատումները մինչև ԳԿՀ-ի հաստատության դնելը, հանձնել գործարկոմին՝ բանվորական հանձնաժողովներում և խորհրդակցություններում քննելու և մշակելու համար։

Գործարկոմին հանձնելուց հետո 10 օրվա ընթացքում նորմաները պետք է հաստատվեն ԳԿՀ-ի կողմից։ Եթե այդ ժամանակամիջոցում նորմաները ԳԿՀ-ի կողմից հաստատված չլինեն, ադմինիստրացիան դրանք կկիրառի անկախ հաստատումից։ Տարաձայնությունները լուծվում են սովորական կարգով. իսկ աշխատանքի հաշվարկումը կատարվում է 55-րդ կետի համաձայն։ Նոր սահմանված կամ փոփոխված նորմաները և գնահատումները պետք է ձեռնարկու-



թյան մեջ կիրառվեն՝ բանվորներին հայտարարելուց մեկ օր հետո միայն։

53. Գ.Կ.Հ.-ի չնախատեսած առանձին աշխատանքների նորման և գնահատումը կատարում է ադմինիստրացիան և հայտնում է աշխատողներին մինչև աշխատանքը կատարելը։ Աշխատողը գնահատման հետ համաձայն չլինելու դեպքում վեճը լուծում է Գ.Կ.Հ.-ը, այդ մասին իրենց հայտարարություն արվելուց 24 ժամվա ընթացքում, ընդ որում, բանվորն իրավունք չունի իրեն տրված աշխատանքը դադարեցնել ու չկատարել։

54. Եթե ԳԿՀ-ի նորմաները և գնահատումները հաստատելիս կողմերը համաձայնության չգան, աշխատանքը պետք է կատարվի ադմինիստրացիայի նշանակված նորմաներով և գնահատումներով։ Այդպիսի գործերի համար տրված վճարը համարվում է կանխավճար։ Վերջնական հաշվարկը կատարվում է՝ նորմաները կոնֆլիկտային օրգաններում հաստատվելուց հետո՝ առաջին վճարի միջոցին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե տեխնիկապես հնարավոր չէ գործը գնահատել նախ քան բանվորին հանձնելը, ապա այդ դեպքում

գնահատումը կատարվում է այն հաշվով, վոր տվյալ շաբաթվա ավելորդ աշխատավարձը վճարվի հետագա շաբաթվա աշխատավարձի հետ։

55․ Գործավարձային գնահատումները կատարվելու յեն աշխատանքի բնույթով և վոչ թե աշխատանք կատարող անձի կարգով (դրույքով)։

56․ Վերանայված արտադրանքի նորմաները և գործավարձային գնահատումները այս կամ այն բաժանմունքում կամ ամբողջ ձեռնարկության նկատմամբ կարող են վերանայվել գործարկոմի և տնտմարմնի փոխհամաձայնությամբ, միայն այն դեպքում, յեթե նորմաների կիրառման ժամանակաշրջանում տեղի յեն ունենում կազմակերպչական և տեխնիկական այնպիսի բարեկարգումներ, վորոնք բարձրացնում են բանվորի արտադրողականությունը։

57․ Պետհրատի տպարանի բոլոր ցեխերում աշխատող 4-րդ կատեգորիայի մեջ յեղած աշակերտները պետք է մտնեն գործավարձայինի մեջ, իսկ այդպիսիների դուրս մնալու դեպքում ադմինիստրացիան պարտավոր է վճարել իրենց հիմնական դրույքի 20%-ը, վորպես հավելյալ վարձատրություն։



58․ Գործավարձային ձևով աշխատող բաժանմունքների ավագ և օժանդակ բանվորներն ստանում են հիմնական հավելյալ կայուն տոկոս, վորը վորոշում է ադմինիստրացիան և հաստատում ԳԿՀ-ն։ Բայց այն հաշվով, վոր նրանք պակաս չստանան նույն բաժնի վորակյալ բանվորների միջին աշխատավարձից։

59․ Գործավարձային աշխատանք կարող է կատարվել թե անհատական, թե բրիգադային և թե՝ կոլլեկտիվորեն։ Կոլլեկտիվ կամ բրիգադային աշխատանքի դեպքում խմբի աշխատավարձը բաժանվում է նրա անդամների միջև ըստ իրենց բանվորական ժամերի քանակի և սահմանված կարգերի։

1․ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ․— Կոլլեկտիվի կամ բրիգադայի մեջ մտնողների ընտրությունը կատարում է ադմինիստրացիան։

2․ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ․— Վերանայվող և սահմանվող գործավարձային նորմաները և գնահատումների ցուցակը կցվում է այս պայմանագրին։

60․ Վնասակար արտադրության մեջ բանվորական կրճատված օրով աշխատող անձանց, ինչպես նաև մեկ ժամով շուտ ազատված ուսանողների համար գործավարձա-

յին գնահատումները սահմանվում են նույն ձևով՝ արտադրության նորման բաժանելով նրանց կրճատ բանվորական օրվա ժամերի վրա։

61. Արտաժամյաները վճարվում են ոչ թե բանվորի հիմնական դրույքով, այլ նրա փաստացի ստացած գումարով։

62. Խորհրդային Հայաստան թերթի թարգմանիչների համար ֆիքս հոնորար վորոշվում է ամսական 120 ռուբլի, որի դիմաց ամեն մի թարգմանիչ օրական տալու յե 250 տող 3 և ½ կվադրատանոց թարգմանություն։

63. Թարգմանությունների վարձատրության չափը հաշվվում է հետևյալ նորմաներով՝

ա) Կորպուսի տողավարձը հաշվել 2,3 կոպեկ.

բ) Պետիտի տողավարձը հաշվել 2,8 կոպեկ.

գ) Կազմած մեծ նյութերը (ճառեր, զեկուցումներ և հոդվածներ) հաշվել ½ կոպեկով ավել մեկ տողի համար, այսինքն կորպուսը 2,8 կոպեկ, պետիտը՝ 3,3 կոպեկ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հիշյալ նորմայից ավելի կատարված թարգմանությունները կա-



տարվում են ժամանաչված տողավարձի հաշվով։

64. Թարգմանիչների ֆիքս հոնորարը տրվելու յե հոնորարների հետ միասին վոչ ուշ յուրաքանչյուր ամսի 10-ը և 25-ը։

65. Այն թարգմանիչները, վորոնք խմբագրության հաստիքի մեջ չեն մտնում, այդպիսիներին թույլ չի տրվում թարգմանություններ կատարելու, իսկ բացառիկ դեպքերում այդ հարցը համաձայնեցնել գործարկոմի հետ։

66. Խմբագրության աշխատողներին թույլ չի տրվում միաժամանակ տարբեր հիմնարկ-ձեռնարկներում աշխատել։

67. Գործավարձային աշխատանքների մեջ նորմալ (բնական-չափավոր) փչացումների համար բանվորի աշխատավարձից վոչինչ չի պահանջվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փչացումի չափավոր տոկոսը սահմանում է ադմինիստրացիան և հաստատում ԳԿՀ-ն։

68. Յեթե փչացումի տոկոսը նորմայից բարձր է և կամ յեթե փչացումը նախատեսնված չէ, այդ դեպքում՝

ա) Յեթե փչացումը հետևանք է յեղել

բանվորի անփութության, փչացած արտադրանքը չի վարձատրվում, իսկ նորմայից բարձր փչացածի համար արժեքը հետ է գանձվում բանվորի աշխատավարձից, սակայն այն հաշվով, որ յուրաքանչյուր անգամ գանձվելիք գումարը նրա շաբաթական աշխատավարձի ⅓-ից ավելի չլինի։

բ) Յեթե փչացումը բանվորի մեղքը չէ, այլ նյութի, գործիքների վատ որակը, այդ դեպքում փչացած ապրանքը վարձատրվում է սահմանված գնահատման կամ բանվորի նախորդ յերեք ամիսների միջին աշխատավարձի համեմատ։

69. Կատարվող աշխատանքի համեմատ ադմինիստրացիան բանվորներին և ծառայողներին նշանակում է տարիֆային կարգով, համաձայն Համամիութենական ՏԱԲԱՍ կենտկոմի կարգացանցի տպագրված 1930 թ. բանվորը նշանակված կարգի հետ չհամաձայնվելու դեպքում հարցը լուծվում է ԳԿՀ տված հայտարարությունների կարգով։

70. Բանվոր-ծառայողների բարձր կարգից իջեցնելը կարող է տեղի ունենալ ԳԿՀ-ի կողմից պարզված հետևյալ դեպքերում՝

ա) Յեթե աշխատանքի որակը չի համապատասխանում նշանակված կարգին և յեթե այդ անպետքությունը պարզված է



սկզբնական կարգի նշանակելուց հետո աշխատանքի ընթացքում։

բ) Կարգի իջեցման չհամաձայնվող բանվոր-ծառայողը կարող է արձակվել ընդհանուր հիմունքներով՝ ստանալով 15 որվա միջին աշխատավարձը (Աշխ. որենսգրքի 89 հոդ.), ավելի ցածր կարգի փոխվելու համաձայնողը փոխվելու որից 15 որ ստանում է նախկին աշխատավարձը։

71. Այն բոլոր բանվոր-ծառայողները, վորոնք ընտրվում են արհմիության և կոոպերատիվ մարմիններում, բացի Աշխ. Որենսգրքի 160 հոդվ. ցույց տված դեպքերից, պահում են իրենց նախկին պաշտոնները, կամ համապատասխան աշխատանքի իրավունք այն դեպքում, յերբ պահանջ կներկայացվի մեկ ընտրական շրջան վերջանալու որից յերեք ամսից վոչ ուշ։ Նույն իրավունքը վերապահվում է այն բանվոր-ծառայողներին, վորոնք առաջ քաշման կարգով փոխադրվել են ուրիշ հիմնարկ, փոխադրման որից վեց ամսվա ընթացքում։

## 8. ԱՇԽՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

72. Տպարանում պետք է ունենալ բավարար թվով լվացարաններ և պահանջված քանակությամբ սապոն։

Ձեռնարկությունը պարտավորվում է ֆիզիքական աշխատանք կատարող բանվորներին և մեքենագրուհուն վեց ամիսը մեկ անգամ տալ մասնագիտական հագուստներ՝ իսկ ամեն որ հանգստի ժամերին թեյ: յերեսի սրբիչներ, հետ ստանալով հները,

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ա) Կաթը տրվում է ձուլարանի, ցինկոգրաֆիայի, լինոտիպի, ստերեոտիպ և ռոտացիոն ու հետագայում նոր բացվելիք վնասակար ցեխերի բանվորներին:

բ) Բոլոր գրաշարներին տրվում է յուրաքանչյուր աշխատանքի օրվա համար մեկական բաժակ կաթ:

գ) Բանվորների արտահագուստների մաքրությունը իր վրա չէ վերցնում ձեռնարկությունը, 15 օրը մեկ անգամ արտահագուստները և շաբաթը մեկ անգամ յերեսսրբիչները լվանալ տալով:

դ) Մասնահագուստի փոխարեն դրամական փոխհատուցում տալ չի թույլատրվում:

յե) Ըստ պաշտոնների մասնագիտական հագուստների ցուցակը կցվում է:

73. Ձեռնարկությունը պարտավոր է բոլոր բաժիններում ստեղծել առողջապահիկ պայմաններ և ապահովագրել բանվոր-ծա-



ռայողների կյանքը դժբախտ պատահարների դեպքում:

74. Տեխնիկական անվտանգությ[illegible]յալ մար նախատեսնված գումարները օգտ[illegible]ծել ժամանակին և այդ ուղղությամբ Աշխատողկոմատի հետ կնքել տեխնիկական անվտանգության պայմանագիր:

75. Ձեռնարկության բոլոր ցեխերում պետք է լինի դեղարկղ անհրաժեշտ դեղորայքով՝ շտապ օգնություն ցույց տալու համար:

## 9. ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

76. Բոլոր Բանվոր ծառայողները և խմբագրության աշխատավորները վոչ պակաս 5 և կես ամիս աշխատելու դեպքում օգտվում են հերթական արձակուրդով տարվա համար հետևյալ ձևով:

ա) Բոլոր բանվորները ստանում են մեկ ամսվա արձակուրդ:

բ) Բոլոր մեքենագրուհիները օգտվում են 21 օրվա արձակուրդով տարվա համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այն գրասենյակային աշխատողները, վորոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ և աշխատում են այնքան, վորքան նույն ցեխի բանվորները,

նման աշխատակիցները նույնպես ստանում են
տարվա համար մեկ ամսվա արձակուրդ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Մանրամասն ցուցակը
[illegible]ակուրդի վերաբերյալ կցվում է սույն
անդ[illegible]ավաքական պայմանագրին, վորպես հավել-
ված:

77. Ձեռնարկությունը պարտավոր է
տարեվերջին փակել բոլոր բանվոր-ծառա-
յողների, խմբագրությունների, աշխատա-
վորների արձակուրդային հաշիվները:

78. Արձակուրդի իրավունք ունենալու
համար սահմանված ժամանակից շուտ ար-
ձակվող բանվոր-ծառայողը հաշվեհարդարի
ժամանակ ստանում է դրամական փոխհա-
տուցում չօգտագործված արձակուրդի փո-
խարեն: Մեկ ամիս արձակուրդով օգտվող-
ները ստանում են ամսական աշխատավարձի
1–12-ի, իսկ 15 օրով օգտվողները 1–24 չա-
փով:

## 10. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

79. Անչափահասները ձեռնարկության
մեջ կազմում են վորակյալ բանվորների
(—ա) ընդհանուր թվի 10%-ը, վորից 30%-ը
պիտի լինեն կանայք:

Յեթե Աշխբորսայում կան ցուցակագըր-



ված մեր միության անդամ աշակերտական
հրջանը չավարտած անչափահաս գործա-
վուրկներ, գործարանի անչափահասների
տոկոսը լրացվում է առաջին հերթին հիշյալ
գործավուրկներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ադմինիստրացիան
պարտավոր է բրոնիայի թիվը լրացնել հար-
վածային բանվորների և յերկարատեվ բան-
վորական ստաժ ունեցող բանվորների զավակ-
ներով:

80. Աշակերտության վորակավորման
համար 1931 թվի հունվարի 1-ից կազմակեր-
պել բրիգադային ուսուցում, վորի մեջ մըտ-
նում են 1–4-րդ կարգի աշակերտական ցան-
ցում յեղածները: Պետհրատը պարտավոր-
վում է գրաշարանոցին և մեքենայական
բաժնին կից բաց անել վորակավորման կուր-
սեր առանձին ցեխերով և հատուկ հրահան-
գիչներով: Հետագայում՝ հնարավորության
դեպքում նույն տիպի ուսուցման ցեխեր բաց
անելով նաև մյուս բաժիններին կից:

81. Պետհրատը պարտավոր է 6 ամիսը
մեկ անգամ բժշկական քննության յենթար-
կել աշակերտությանը, իսկ տարեկան մեկ
անգամ ընդհանուր բանվորությանը և կա-

տալեն բժշկական հանձնաժողովի վարչումները։

82. Վորակավորման և վերավորակավորման համար հաճախակի կենտրոնական քաղաքներ գործուղել ցեխերի աչքի ընկնող վորոշ հարվածայիններին և նրանց ցուցակը համաձայնեցնել արտադրական խորհրդակցության և գործարկոմի հետ։

83. Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով և ույժի մեջ է մտնում 1931 թվի հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը և տարածվում է ներկայումս աշխատող և թե հետագայում նոր ընդունվող բանվոր ծառայողների վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Սույն պայմանագիրը չի տարածվում վարձման աշխատանքից արձակելու կամ աշխատանքի գնահատման իրավունքով ոժտված վարչական կազմի վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Պետհրատը անհատական պայմանագիր կնքելիս պարտավոր է պատճենները ներկայացնել վոչ ուշ քան այդպիսիների կնքումից 3 որ հետո։

84. Պայմանագրի կիրառման ժամանա-



կամիջոցը կամ պայմանագրերի առանձին կետերը, փոփոխության կարող են յենթարկվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ։

85. Սույն պայմանագրի կիրառման կամ նրա մեկնաբանման հողի վրա ծագած կոնֆլիկտների և վեճերի լուծման համար Պետհրատում կազմակերպվում է Գ.Կ. Հանձնաժողով։ ԳԿՀ-ի կազմակերպման կարգը, նրանց պարտականությունները սահմանվում են հատուկ կանոնադրությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պետհրատը և գործարկոմը ԳԿՀ-ի անդամներին պետք է տան համապատասխան լիազորություններ։

86. Սույն պայմանագրի կնքման ժամանակ Պետհրատում աշխատողների թիվն է 499 հոգի։

87. Սույն պայմանագրով չնախատեսված աշխատանքի բոլոր պայմանները կարգավորվում են աշխատանքի այդ մասին գործող որենքներով։

88. Սույն պայմանագիրը Պետհրատի վարչության հաշվին տպագրվում է և բա-

C 31-1
1322
32

ժանվում բանվոր-ծառայողներին մեկական օրինակ։

Հայաստանի տպագրական արտադրական բանվորների՝ Պետհրատի գործարկոմի նախագահ՝

Վ. ՍԱՐՈՅԱՆ

ՀՍԽՀ Պետական Հրատարակչության Վարչության նախագահ՝

Ն. ՄԱԿԻՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Յերևան, Գլավլիտ 6297 (բ)․ Պատ 1661, Տիրաժ 500

ՀՀ Ազգային գրադարան
NL0204110